ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2024 թ. _____ «____»
Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ

Կազմված է «_____» _____ 2024թ.

և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ ----

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Երևան քաղաքի ավագանու

__.____.2024թ.

N_____Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ Տ.Ավինյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«25» դեկտեմբերի 2019թ.

Գրանցման համար՝ 286.215.1107479

ՀՎՀՀ՝ 02819226

25.12.2019թ.գրանցված կանոնադրության

թիվ _____փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի կողմից

_____ ____ 20___թ.

աշխատակից՝ _____ _____

«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

Ե Ր Ե Վ Ա Ն 2024թ.

1. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Կանոնադրության 2.3-րդ կետի 8-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) Կանոնադրության 2.3-րդ կետը լրացնել նոր 9-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) անշարժ գույքի կամ դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սանիտարական մաքրման, այդ թվում՝ ձնամաքրման, ծառայությունների մատուցում:»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է 25.12.2019թ. պետական ռեգիստրում գրանցված «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվել «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը, որով նախատեսվում է սահմանել, որ նույն կարգի 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ կամ 4.1-ին ենթակետերով կամ 13-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ տարածքի սանիտարական մաքրման, այդ թվում՝ ձնամաքրման կամ տարածքի կանաչապատման կամ կանաչ տարածքների անհրաժեշտ խնամքի ու պահպանման պարտադիր բարեկարգման աշխատանքների կատարումից ազատվում են անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր նշված աշխատանքների վերաբերյալ Երևան համայնքի ենթակայությամբ գործող կազմակերպությունների հետ ունեն կնքված ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված է, որ Երևան քաղաքի ավագանին սահմանում է Երևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի ավագանին 2009 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունել է «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» N 48-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), որի հավելվածով սահմանվել են Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման պահանջները:

Որոշման հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված է, որ պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Երևանի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով: Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

Նույն Որոշման հավելվածի 4-րդ կետով նախատեսված է, որ նույն կարգի գործողությունը տարածվում է Երևան քաղաքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա, առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա, այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա, ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա, բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

Նույն Որոշման հավելվածի 5-րդ և 13-րդ կետերով նախատեսված են նաև պարտադիր բարեկարգման աշխատանքները: Մասնավորապես, Որոշման հավելվածի 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ և 4.1-ին ենթակետերով որպես պարտադիր բարեկարգման աշխատանքներ նախատեսված են տարածքների կանաչապատումը, դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը, տարածքի պարբերաբար մաքրումը՝ սանիտարական մաքրումը: Նույն հավելվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետով որպես պարտադիր բարեկարգման պահանջ նախատեսված է տարածքի սանիտարական մաքրումը, և ձնամաքրման աշխատանքները:

Գործնականում, ներկայումս Երևան քաղաքում բազմաթիվ են այն դեպքերը, երբ սեփականատերերը կամ տիրապետողները պարտադիր բարեկարգմանն ուղղված աշխատանքները պատշաճ կատարելու նպատակով դիմում են Երևանի համայնքի ենթակայության կազմակերպություններին՝ համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու նպատակով:

Այս առումով նկատի ունենալով վերոգրյալը՝ Նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել ««Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ՝ հնարավորություն ընձեռնելով որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել նաև անշարժ գույքի կամ դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սանիտարական մաքրման, այդ թվում՝ ձնամաքրման, ծառայությունների մատուցումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ